## ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

## (ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

**Հայաստանի Հանրապետություն** 22.12.2014

**Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալություն/**

**Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ**

**Ծրագրի անվանումը:** Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման Ծրագիր

Ֆինանսական կառավարման ձեռնարկի մշակում

**Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝** SDC-8

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման Ծրագրի Ֆինանսական կառավարման ձեռնարկի մշակման համար:

**Առաջադրանքի նպատակը.** Խորհրդատուն պետք է մշակի ֆինանսական կառավարման բոլոր ասպեկտները նկարագրող ձեռնարկ, որը կներառի.

1) Հաշվապահությունը, այդ թվում՝

- Կազմակերպությունում եւ Ծրագրում կիրառվող հաշվապահական ստանդարտները: Հաշվապահության եւ ֆինանսական հաշվետվության հիմքը:
- Հաշվային պլանի ընդհանուր նկարագրությունը:
- Հաշվապահական հաշվառման սկզբունքները եւ ստանդարտները:
- Համակարգչային հաշվապահական համակարգն ու դրա կապը ԿՏՀ-ի հետ:
- Հաշվապահական աշխատակազմի պարտականությունները, ներառելով աշխատանքի նկարագրությունները:
- Ակտիվների կառավարումը եւ հաշվառումը:

2) Պլանավորում եւ բյուջետավորում, այդ թվում՝

- Տարեկան եւ եռամսյակային պլանների եւ բյուջեների մշակման գործընթացի նկարագրությունը:

3) Ֆինանսական հաշվետվություններ, այդ թվում՝

- IFR – ների պատրաստում եւ ներկայացում:
- Կառավարությանը ներկայացվող հաշվետվություններ:

4) Միջոցների հոսքը եւ ծախսումները, այդ թվում՝

• Միջոցների հոսքի մեխանիզմի նկարագրությունը, ներառյալ Հատուկ հաշիվը եւ այլ տեղական հաշիվները (օրինակ՝ համաֆինանսավորման հաշիվը):

• Բանկային հաշիվները եւ լիազորված անձերի ստորագրությունները:

• Հաշիվ-ապրանքագրերի մշակումը եւ կապալառուներին, մատակարարներին ու խորհրդատուներին վճարումները (ՖԿ/հաշվապահական աշխատակազմի պարտականություններում պետք է նշված լինի, թե ով է պատասխանատու հաշիվ-ապրանքագրերի մշակման որ փուլի համար, օրինակ՝ հաշիվ-ապրանքագրում նշված ծավալների, գների եւ ժամկետների համեմատությունը պայմանագրում նշվածների հետ, հաշվարկների ճշտության ստուգումը, վճարման համար հաշիվ-ապրանքների հաստատումը, վճարումը, դրա հաշվառումը, ներառյալ, թե տվյալ վճարումը ինչպես պետք է դասվի ծախսման որոշակի կատեգորիային կամ ծրագրի բաղադրիչին, վճարումը ժամանակին կատարելը, այնպես, որ դա չհակասի պայմանագրային պահանջներին):

• Կանխավճարներ եւ բանկային երաշխիքներ:

• Client Connection համակարգ:

• Client Treasury համակարգ:

5) Ներքին վերահսկողություն, այդ թվում՝

• Պայմանագրերի կառավարում եւ մոնիտորինգ:

• ՖԿ/հաշվապահական աշխատակազմի պարտականությունները եւ պարտականությունների բաժանում աշխատակազմի միջեւ:

• Կանխիքի վերահսկողություն:

• Հիմնական միջոցների կառավարում:

• Վառելիքի վերահսկում:

• Միջազգային եւ տեղական գործուղումների վերահսկում:

• Ժամավճարային պայմանագրերի վերահսկում:

• Աշխատավարձի ցուցակի պատրաստում եւ դրա փոփոխություն, աշխատավարձի վճարում:

6) Արտաքին աուդիտ, այդ թվում՝

• Ծրագրի եւ կազմակերպության աուդիտի միջոցառումները:

• Ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի պարտավորությունների տեղեկագիրը պետք է ներառված լինի հավելվածներում:

**Առաջադրանքի տևողությունը 75 օր:**

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

**Ընտրության չափանիշներն են.**

- ☐ Կրթություն՝ ֆինանսների, տնտեսագիտության և առնչվող ոլորտներում
- ☐ Հաշվապահության և ֆինանսական կառավարման ոլորտում նախկին փորձ
- ☐ Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսական կառավարման ընթացակարգերի օգտագործման նախկին փորձ
- ☐ Նմանատիպ ձեռնարկների մշակման փորձ

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-իփոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011» («Խորհրդատուների Ուղեցույցներ» (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January, 2011) բաժին V-ում սահմանված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2015 թ. հունվարի 12-ը, ժամը 17:00-ը:

Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42